ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ.նոյեմբերի 24-27-ը
կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Գագիկ Մկրտչյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝
Ղրղզստանի Հանրապետություն (Բիշկեք) 2021թ. նոյեմբերի 24-27-ը

4. Հրավիրող կողմը՝
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝
Տեսչական այց՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Ղրղզստանի Հանրապետության կողմից համաձայնագրի դրույթների կատարման ընթացքի ուսումնասիրության նպատակով:

6. Քննարկված թեմաները՝
«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված պարտադիր պահանջների դրույթներին Ղրղզստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համապատասխանությունը, գործնականում ոսկերչական իրերի հարգորոշման և հարգադրոշման աշխատանքների իրականացումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝
Տեսչական այցի ընթացքում քննարկում տեղի է ունեցել Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության թանկարժեք մետաղների դեպարտամենտում, որին մասնակցել է Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ռուսլան Տատիկովը: Այց է կատարվել ֆինանսների նախարարության թանկարժեք մետաղների հարգորոշման և հարգադրոշման լաբորատորիա, որտեղ դիտարկվել են հարգորշման և հարգադրոշման գործընթացի իրականացման կազմակերպական և տեխնոլոգիական ասպեկտները, ղրղզական կողմը ներկայացրել է այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ

տեխնիկական միջոցները: Այցեր են կատարվել նաև Բիշկեքում գործող ոսկերչական խանութ-սրահներ:

Արդյունքների ամփոփման նպատակով ծավալված քննարկման ընթացքում հայկական պատվիրակությունն ընդհանուր առմամբ դրական գնահատեց Ղրղզստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառությանը վերաբերող գործող ազգային օրենսդրությունը, իրավական ակտերով սահմանված պահանջների ու պայմանների կատարումը, միևնույն ժամանակ մատնանշելով ոսկերչական իրերի մանրածախ շուկայում վերահսկողության հետ կապված որոշ խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Ղրղզական կողմը տեղեկացրեց, որ ներկայումս ազգային օրենսդրությունում նախաձեռնվել են վերահսկողական բնույթի որոշակի խստացումներ, որոնց կիրառումը կսկսվի հաջորդ տարվա սկզբից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների արդյունքում Ղրղզստանի Հանրապետության կողմից թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառության կանոնակարգմանն ուղղված ընթացիկ աշխատանքները նախնական գնահատվել են դրական:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

29.11.2021թ.